Ա Ռ Ա Ր Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի ԹԻՎ 104-Ն, 107 ԵՎ 109 ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ 104-Ն որոշումը չի համապատասխանում «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասին, համաձայն որի՝ համայնքի բյուջեում փոփոխությունները չեն կարող խախտել համայնքի բյուջեի հավասարակշռությունը:

Համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառնական դասակարգման (Բաժին 11 խումբ 1 դաս 2 «ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ» ծրագիրը) պակասեցվել է 309.4 հազ. դրամով, իսկ նույն ծրագիրը ըստ տնտեսագիտական դասակարգման հոդվածների՝ 5.0 հազ. դրամով:

Բացի այդ տեղեկացնում ենք, որ համայնքի բյուջեի եկամուտների նվազեցումը կատարվում է համապատասխան հիմնավորումների առկայության դեպքում: Ձեր կողմից 2020 թվականի հունվարի 21-ի թիվ 37 գրությամբ ՀՀ Շիրակի մարզպետարան ներկայացված հիմնավորումը լիարժեք և բավարար չէ բյուջեում նվազեցում կատարելու համար:

Թիվ 107 որոշման 1-ին կետում «2019» թիվը փոխարինել «2020» թվով:

Թիվ 109 որոշման վերնագրում և բովանդակության մեջ «ներդրում» և «նվիրատվություն» բառերը փոխարինել «նվիրաբերություն» բառով:

18.02.2020թ.